



ԽՄԱԱԳՐԱԿԱՆ

ՅՈՒՆՉԻԿԱ



ՆՈՐՀԱԿՈՐ ու Հնորհալի նոր
շրջան մը՝ գրական ու ծողու-
թրդական գասակարգին մաղ-
թելով, յետարձ ակնարկով
մը քննենց Հայութեան նոյն
երկու ներկայացուցչաց մտաց ու սրտի գործն
և վաստակը:

Կենացի ամբողջ շրջան մը եւս կը զորի
անցեալին մէջ, ու այն վայրի հեանին որ նոր
արփին կը բարեւէ հանրութիւնը, գրակա-
նին ու ժողովրդականին միջև փոխադարձ
հարց մը կ'ըլլուի, թէ ի՞նչ ըրինք Եւ հե-
տաքրքական է իմանալն թէ ազգին համար
ի՞նչ ըրա գրական գասակարգն, և ի՞նչ ժո-
ղովրդականը:

Գրականին ներկայացուցիչն է Մամուլը.
մանենց հայ տպարանները, և պիտի գոնենց
գոհացուցիշ արդիւնը մը, հարուստ կամ ֆա-
սացի վաստակ մը: Մեր մամուլ զործն ըստ
տեսակին սահմանափակ է. լրագրական և
մատենագրական երկեր են որ կը հրատա-
րակէ. գեղարուստական բաժին չունի, ու
առ այժմ ունենալու ես յօյս չի տար: —
Մատենագրական ուժը լրագրական հակայա-
քայլ յառաջազիմութեան հանդէս նսեմացած
կ'երեւի: Ռուսահայ մամուլը աշխատեցաւ ըստ
սովորականին՝ բաղդատմամբ թրբահայ մամ-
լոյն՝ առատ հրատարակսթիւն մ'ունենալ թա-

ջորդաբար հրապարակ ելանքանստեղծական
գիտական ու վիմասանական ընդ ամէնն 50ի
չափ զրբոյկներ, և ոչ երբեք սուռարահատոր
երկ մը. իսկ թրբահայ մամուլը հազի 20
հատոր կրթական և զիտական զրբոյկներ,
արտասահմանի մամուլն բաղդատմամբ թրբա-
հայ մամուլն սակաւաթի, 18 հատոր ու
սումմական, բասասանեղծական և ազգային
հրատարակութիւններ ընծայեց, իսկ բանա-
սիրական զրբեր ոչ ինչ: — Ռուս և Թուրք
երկրի ազգայնոց լրագրութիւնը ամբողջ առ-
արին մակրնթացութեան և տեղատուութեան
ենթարկուեցաւ. ուստահայ թերբերեանը կը
պարտաստուէր (Կենաց) անուամբ գրական
ու հասարակական վեցամենայ հանկէս մը
հրատարակելու, բայց լրագրական թատե-
րաբեմին վրայ շրաբրացած, այնին ինեղ-
զուելու գոյմը լսեցաւ: Ռուսահայ լրագրու-
թեան մէջ չծիծցան նոր թերթեր և ընդ-
հակառակն եղածները թառամեցան. հոյն այլ
եւս չեն հրատարակուէր մի քանի տարիներ
առաջ կեանք ունեցող հանդէսներն և օրա-
գիրները, որոց ախուր կացութեան ենթար-
կուեցաւ նաև հայ լրագրութեան իբրև գե-
շարուստական հանկէս անզուպականն «Ա-
րաբ»: — Ամբողջ ուստահայը ունին միայն
երկու օրագիր. ախուր է ըսկեն որ անսնց եւս
նիթական ուժն խարխուէ: Թրբահայ լրա-

գրութիւնը որուն ուժը կեզրոնացած է լոկ
Պոլսոյ մէջ, այժմ ամէն օր կը հրատարա-
կէ չըսո օրագիր ու առհասարակ ամենուն
մէջ ալ, ազգային նոր գրականութեան, պատ-
մութեան և կրթական վիճակի մասին՝ գո-
հացուցիչ յօդուածներ միշտ կը գտնուին ։
Ներկայիս ակն յայտնի է, որ ուսահայ
լրագրութիւնը թրբահային հետ բաղադատե-
լով, տեղատութիւնը ուսուահային կը վի-
ճակաւի. Բայց թրբահայուն հրատարակած
հանդէսները բաղդատելով ուսուահային հետ,
այս մասին թրբահայուն ալբատութիւնը շատ
զգալի է: Ի բաց առեալ թիւրակն և Պատ-
կեր, այժմ Պոլսոյ մէջ չի կայ ուրիշ շա-
րադական կամ կիսամնեայ հանդէս մը, որ
կանոնաւոր կերպով լոյց տեսնէր. հոն Մա-
սիս և Հանրագրակալ, մեծ դեր կը խաղային
ու արդ ընդհատ ալբիւներու զաղագրարը կու
տան: Ռուսահայց առնին Ազգագրական հան-
դէս, Լուսայ, Թատրոն վեցամեսյ ստուարա-
հատոր հանդէսներ, և Արարատ, Մուրճ, Աղ-
րիք, ամնօրեայ հանդէսներ, որոց նմաննե-
րուն ստուերն իսկ կը պակսի թրբահայ լրա-
գրական դաշտին մէջ: — Արտասահմանի մէջ
հին թերթերու հետ նորածիներ եւս ամսէ
ամիս կը բողոքին. Գահիրէի Արշալոյսը ու
Փիսինիք, Նիւ-Եօրքի Հայրենիքը ու Զայն
հայրենիքացը, և վերջապէս Փարիզու Հա-
մալարանը ու Բանասէրի 1899 տարւոյ լրա-
գրական պտուղներն են. Գահիրէի ու Ամե-
րիկայի թերթերը Լուստրայի Պ. Արփիարին,
Փարիզու Պ. Մինասին, Մարսիլիայի Պ.
Փորթուգալիանի, Ամէնքի ով Վառնայի թերթ-
երուն հետ տարաշնարչի հայութեան ազ-
գութեան ողի կը վշեն. Իսկ Բանասէր ու
Համալարան դայշ ընկ հմաւուրց նահապեա-
թազմալիքի և Ամնօրեայ Հանդիսի՝ բնաշ-
խարհիկ ու զաղթական հայութեան հայկա-
կան պարութիւնը կը սորլեցընեն և Երո-
պայի գիտակեան լոյցը ճառագայթելու կը
ձգաին: Հայ լրագրութիւնը հաւատարիմ իւր
պարաբին, անձնանուէր ու առանց արժա-
նաւոր վարձարարութեան, Կ'ապրի, Կ'աճի ու
Կ'աշխատի Հայուն մտաւոր կեանքին յառա-
ջադիմութեան և բարուց քաղաքակրթութեան
համար:

Ազգին ունեւոր գառակարգը Բնէ ըրաւ կա-
րօտեալին, որբին ու սովորլուկին: — Աղ-
զին թշուառութիւնը կը ծնի իւր մէջ բարե-
րարներ ու առաքինի գործիչներ. ու այդպի-
սի անձեր պակաս չեղան հայութեան մէջ:
Զանշեան իւր մի հրատարակութեամբ ծնո-
զագորկ մատազ մանկիներու համար՝ հօֆը
որբանց հաստատելու շարժառիթն եղաւ, ու
այսպիսի մեծ բարերար մը՝ սրուն զրական
գործունկութիւնը՝ մի բանի ամիս առաջ տո-
նուցաւ, արքօք ամորդ հայութիւնը կրցաւ
զանի արթանապէս վարձատրել: Եթէ բաղ-
դատենց թրբահայ, ուսուահայ ու արտասահ-
մանի ազգայնց բարերարական գործն, ուս-
ուահայոցը միշտ բարձր, միշտ զրուատելի
պիտի գտննիք. Պոլսու ու զաւառները և նոյն
իսկ արտասահմանի մէջ պակաս չեն հա-
րուսատ վաճառականներ ու փաշայ աղաներ.
և սակայն, ատոնք չեն որ օգնութեան կը
հասնին հայրենիքի մերկերուն ու բաղցած-
ներուն, այլ միշտ զասակարգը իւր համեստ
զրպանն կը հանէ զրամը, ու կը ձգէ հան-
գանակութեան գանձանակին մէջ: Թամի-
րեան, Տիկին Քանանեան, Քրիզոր Մե-
զուինեանց, Տիկին Մարիամ Մարտիրո-
սեան, Խիթարեան, Յակոբեան, Ա. Պողո-
սեան, Խաչատրեան, Ժամհարեան Եղբարը,
Լեռն Ղովեանց, Խօջամիրեան, Մկրտիչ Ա-
թանասեան, Փրիկոնեան, Թագուհի Փանո-
սեան, Գ. Ալբանեանց, Մարիամ Գիամեեան,
և այն, այս ամէնն Ռուսահայ են և 1899
տարւոյ Հայ կարօտելոց՝ ամենն մեծ բա-
րերթերները եղան: Կը փափաքինը նաև Պոլ-
սոյ ու Արտասահմանի հայ զասակարգին մէջ
գտնել ազգային բարերարներ և յիշել նաեւ
անոնց անունը, և սակայն կարել չէ զտնել
մի հարուստ՝ որ իրեն բարեկործ նուերնե-
րովն անմահցներ անունը: Բայց աղքատ
ժողովուրգը իւր բնաշխարհի աղքատ ազ-
գայիններուն փափուկ սիրտ մը ցուցուց .
ու երբ Վասպուրականի ու Կիլիկիոյ աղքատ-
ներուն սրտարեկ վայնասունը կը զօրանար,
Պարսկաստանի, Գաւառի, Պոլսոյ ու Արտա-
սահմանի մէջ հանդէսներ տեղի կ'ունենալին

ու անոնցմով հաւաքսւած զրամը՝ օգնութեան կը հասնէր թշուառ հայրենակիցներուն։

*

Փորձեց Մամուլը, դորձեցին բարերար-ները. կը մայ հարց մը. Բնչ ըրաւ կղերը։ կաթուղիկ հայ հասարակութեան մէջ ժո-ղովիներ աեղի կ'ունենան, ու ծերունին խմ. մանուկեան եպիսկոպոսն՝ կը բազմի հայ-րապետական աթոռին վրայ ։ Նորին վեհու-թեան վրայ կը փայլի իսչունակ առաջնոր-դութիւն ու ազգասէր և լուսամիտ ողի։ Մի և նոյն հասարակութեան մէջ կրթական յա-ռաջազիմութեան նոր զարկ կը տրուի. Թէր-զեան եպիսկոպոսն կիլիոյ մէջ վարժարան-ներ կը հասուատէ ու կրթութեան տարած-ման խանճ ու գործ կը ցուցընէ. Միխթա-րեանը՝ Պոլսոյ ու զաւարի մէջ սկսած են վարժարանները բարեկարգել. Պարսկաստա-նի հայ հասարակութիւնը առաջնորդութեամբ Այլատեան եպիսկոպոսի կրթարաններ հաս-տատելու գեղեցիկ զարդարը կ'ունենայ։ Նոյնակս հոգեւոր պետ մը, Զմիւնիոյ մեծ հայ Հրապարակազրին յորելան հանդիսին կազմակերպութեան նախազահ կը բազմի։ — Պոլսոյ ազգային քրոնիկներու ամէն օ-րուան նիվը եղած է ու եղաւ կղերական շարժումը. Էջմիածնի Հայրիկը հակառակ իւր ծերունի կեսանին երիտասարդ ողի մը ցուցուց, ու այն արտասահմանի հայութեան՝ որ արիներէ ի վեր բոլոցական բարողիչ-ներու հովուութեան ենթարկուած էր, ամե-նուն հասուց իւր ձեռնազրած հովուապետ-ներէն և հովիներէն։ Նոյն Հայրիկը ի պաշտպանութիւն Հայ եկեղեցական կա-լուածներու և կրթարաններու՝ իւր քաղա-քական իշխանապետին պարտ ու պատշաճ աղերսներ ըրաւ. Պոլսոյ ազգային երկու պատրիարքները փոխազարձ այցելութեամբ համերաշխ գործունէութեան զաշն մը զրին, ու արգ հոն լրացիները կ'աշխատին զաւա-նանցի մոլեսանդրութենէն ծագած մեծ ու զուգահաւասար ատելութիւն՝ զանել, փա-րատել և եղրայր եմք մեջի ոգին ճիւզաւու-

րել ընդհանուր ազգութեան մէջ։ Թէրա-հայոց եղբայրութեան զօղը օրէ օր կ'ուժութեայ և կ'ամրապնդի. իսկ Ռուսահայոցը ընդհակա-ռակն կը ծիրի կը փարի. Պոլիխ լրագիրներն են որ եղբայրական միութիւն կը քարոզեն. իսկ ի Ռուսահայոց՝ Նոր-Դիար ամենաթանձր մոլեսանդրութեամբ անմիաբանութիւն, տա-րանջանութիւն՝ ու ատելութիւն կը գումէ իւր ընթերցուղներուն. և մեծ բանաստեղծը իւր շիրմին տակէն գեպ ի Սպանդար կը մնչէ «Մէկտեղ յոզնինք, մէկտեղ ցանենք, մէկտեղ թափին մեր բրախիններ . . . որ կանք առնուն Հայոց զաշտեր»։ Հայրենի-քին են այս հապաչը, կը մաղթենք որ հայու-թեան սրտէն չերթան ի բաց։

*

Փորբիկ ազգն ունեցաւ նաեւ մեծ կո-րուսաներ. տարույ սկիզբէն զիւանագէտ մեծ փաշան հանգիստ կու տայ իւր յոզնած մարմոյն. Հայութեան հետ Երուպան ու Եղիստոս կը հոչակեն նոյն փաշային քա-զարագէտ հանճարը ու արզարասէր ողին. Յաջորդաբար Պոլսոյ մէջ կղերական պետուր կը կնքեն իրենց մանկանացուն, Պատրիարք Ազարեան, և արքեպիսկոպոսը Ալէաթեան ու Ալզգեան։ Ռուսահայը եւս ունեցան զահեր թէ՛ եկեղեցական և թէ մողովլա-կան զասակարգէն. ու անոնց մէջ գեռ թարմ է Գուլամիրեանցի սուլզը. որուն ներկայիս կը մասնակցի ամբողջ զրասէր հայութիւնը. վասն զի նա էր հայ գեղարուստական հան-դիսին հիմնագիրը, նա էր որ Գոլոմպական աշխարհահանգիսին մէջ՝ ցոյց տուաւ հայ հանճարին զեղարուեստի տէր ըլլախն, նա՝ հօն իւր ուղեղին վաստակով՝ հայուն ճա-շակաւոր ճակաւար մրցանակով պսակեց. հայութիւնը կ'ողբայ Գուլամիրեանցը, վասն զի անոր կորուստով, այլ հւս կորուսած կը տեսնէ իւր մայուն զեղեցիկ ճաշակի ու զե-ղազարը հրատարակութեան փառը ու պա-տիւը՝ Արաբը։

Հանգիստ կը մաղթենց անոնց սուլինե-րուն ու խաղալ և երջանկաւէտ նոր ատարի մեր աղնիւ ընթերցուղաց։

Հ. Ա. Խրեմ.